



ՁԵՐ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏՎԱՍԽԱՆՆԵՐԸ

տրանսգենդեր անձանց,
գենդերային ինքնուրթյան
և գենդերային
ինքնարատահայտման
վերաբերյալ




RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

Էլ .փոստ՝ rightsidengo@gmail.com

Վեբ կայք՝ www.rightsidengo.com

Հեռ.՝ +374 11 770 880



Գրքույկը մշակվել է Աշոտ Գևորգյան-ի կողմից
Լիլիթ Մարտիրոսյան-ի ընդհանուր
խմբագրությամբ
Դիզայնը՝ Վրեժ Վարժապետյան-ի

2018 թվական
«Իրավունքի կողմ»
իրավապաշտպան հասարակական
կազմակերպություն

Նախաբան

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2016թ.-ին և հանդիսանում է տրանսգենդեր անձանց հիմնախնդիրներով զբաղվող համայնքահեն հասարակական կազմակերպություն: Մեր առաքելությունն է ապահովելով տրանս անձանց պաշտպանվածությունը հասնել տրանսգենդեր անձանց հավասարության ու բարօրությանը՝ սոցիալ-մշակութային և իրավական փոփոխությունների միջոցով և համագործակցելով պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների հետ: Մեր առաքելությանը հասնելու ուղղություններից մեկը մեր աշխատանքի զանգվածային լրատվամիջոցներների հետ սերտ աշխատելն է, քանի որ ՉԼՄ-ները կարող են էապես ազդել սոցիալական լարվածության մակարդակը նվազեցնելու վրա և օգնել լուծել հասարակությունում առկա խնդիրները: Մյուս ուղղություններից մեկն այն է, որը մեր կազմակերպությունը կարևորում է, դա արդյունավետ աշխատանքն է համապատասխան մասնագետների հետ, ինչպիսիք են օրինակ բժիշկները, իրավաբանները, հոգեբանները և այլոք: Այնուամենայնիվ մեր աշխատանքը տարատեսակ մասնագետների և ՉԼՄ-ների հետ ցույց տվեց որ, նույնիսկ ամենափորձառու մասնագետները հաճախ չունեն բավարար գիտելիքներ տրանսգենդեր անձանց, գենդերային ինքնության կամ ինքնաարտահայտման վերաբերյալ: Ցավոք սրտի, Հայաստանի ուսումնական հաստատություններում գենդերի ու սեռականության վերաբերյալ կրթական ծրագրերի պակաս կա, ինչն իր հերթին ազդում է յուրաքանչյուրիս աշխարհընկալման վրա և հետագայում նաև կամա, թե՛ ակամա ազդում մեր մասնագիտական հմտությունների վրա վրա, երբ մենք որպես մասնագետ կարիք ենք ունենում ծառայություն տրամադրել տրանսգենդեր անձին կամ տեղեկատվական նյութ գրել տրանսգենդեր անձանց կամ համայնքի մասին: Մեր այս տեղեկատվական գրքույկը նպատակ ունի օգնել բոլոր լրագրողներին, բժիշկներին, հոգեբաններին, իրավաբաններին, ովքեր ձգտում են զարգացնել իրենց մասնագիտակ հմտությունները:

Այն նաև նախատեսված է բոլոր այն անձանց համար, ովքեր ուղղակի կարիք ունեն ավելի շատ տեղեկատվություն ստանալ տրանսգենդեր անձանց մասին: Իհարկե, այս փոքրիկ գրքույկով մենք չենք հավակնում պատասխանել բոլոր հարցերին, որոնք կարող են առաջանալ տրանսգենդեր անձանց խնդիրները լուսաբանելիս, բժշկական ծառայություններ մատուցելիս, իրավունքները պաշտպանելիս կամ ուղղակի շփվելիս: Տակավին, մարդու սեռականությունից ու գենդերից խոսելիս՝ մեր հասարակությունում շատերի մոտ ամոթի զգացողություն է առաջանում, և շատերը սկսում են առաջնորդվել կարծրատիպերով ու ավանդաբար ընդունված նորմերով: Ցովոք այս թեման, շատ ընտանիքներում, դպրոցներում ու ԲՈՒՀ-երում անգամ տաբու է: Բայց պետք է ընդունել որ մեր սեռական ու գենդերային ինքնությունները մեր ունեցած բոլոր ինքնությունների մասն են. ինչպես մենք մեզ կարող ենք համարել հայ, քրիստոնյա, սպիտակամաշկ, երկսեռական կին կամ տարասեռական տղամարդ, այնպես էլ մեր ինքնության մաս կարող են լինել ցիսգենդեր կամ տրանսգենդեր լինելը: Սեռականության և գենդերի մասին խոսելը բավականին խրթին է, բայց այս գրքույկը մեր առաջին փորձն է համապարփակ կերպով պատասխանել տրանսգենդեր անձանց, գենդերային ինքնության ու գենդերային ինքնարտահայտման վերաբերյալ հասարակությունում առկա հարցերին: Գրքույկը մշակել ենք հարց ու պատասխանի ձևով, իսկ վերջում գտնվող ճիշտ եզրույթների բառարանը, հուսով ենք լայնորեն կօգտագործվի այս գրքույկը կարդացողի կողմից և կաջակցի սեռական ու գենդերային բազամազանության ընդունմանը հայ հասարակությունում:



Ի՞նչ է նշանակում «տրանսգենդեր»:

«Տրանսգենդեր» բառն ընդհանուր եզրույթ է այն մարդկանց համար, ում գենդերային ինքնաարհայտումը և/կամ ինքնությունը չի համապատասխանում իր ծննդի սեռին: Մարդու գենդերային ինքնությունը վերաբերում է իր ներքին զգացմունքին, ինքը տղամարդ է, կին կամ կին ու տղամարդ է միևնույն ժամանակ կամ գուցե ո՛չ կին է և ոչ տղամարդ, միևնույն գենդերային ինքնարտահայտումն այն ձևն է, որով մարդը արտահայտում է իր գենդերային ինքնությունը՝ վարքի, հագուստի ձևի, սանրվածքի, ձայնի, մարմնի կամ այլ հատկանիշներով: «Տրանս» տերմինը երբեմն օգտագործվում է որպես «տրանսգենդեր» եզրույթի կրճատում: Չնայած «տրանսգենդեր» տերմինը ընդհանրացված է, ոչ բոլոր մարդիկ, որոնց ինքնարտահայտումը չի համապատասխանում հասարակության կողմից ընդունված «կանացի» կամ «արական» նորմերին, կարող են իրենց համարել տրանսգենդեր անձ:

Կարևոր է հիշել՝ ոչ բոլոր տրանսգենդեր անձիք են սեռափոխված կամ ցանկանում են սեռափոխվել, և մարդու արտաքինից միայն չի կարելի որոշել մարդու գենդերային ինքնությունը: Միևնույն ժամանակ մենք համոզված ենք, որ անձի ո՛չ գենդերային ինքնությունը, և ո՛չ էլ ինքնարտահայտումը չեն կարող խոչընդոտ հանդիսանալ կարողանալ միջև հարգալից շփման համար:

Ի՞նչով է տարբերվում սեռը գենդերից:

Մարդու կենսաբանական սեռը անձի անատոմիկ, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական և գենետիկական հատկությունների հավաքածու է, որով կենսաբանորեն տարբերվում է իգական սեռի անձի օրգանիզմը արական սեռի անձի օրգանիզմից, և կարող է օգտագործվել ինքնուրույն կամ համադրությամբ՝ նշելու համար անձի սեռը «արական», «իգական» կամ «ինտերսեքս»: Անձի սոցիալական սեռը կամ գենդերն աշխարհագրական, էթնիկ, սոցիալական և պատմամշակութային նորմերի վրա հիմնված սեռի կարծրատիպորեն տարանջատումն է արականի և իգականի: Այս տարանջատման հիմքում ընկած են հասարակության կողմից ընդունված անձի կարծրատիպային դերակատարումները:

Կարևոր է հիշել՝ անձի որևէ կենսաբանական սեռի պատկանելիությամբ անձի գենդերային ինքնությունը չի որոշվում: Մարդու գենդերային ինքնությունը ձևավորում է սեփական ինքնազգացողությամբ, այն հիվանդություն կամ շեղում չէ, անկախ այն հանգամանքից, թե անձն իրեն կին է համարում, տղամարդ կամ տրանսգենդեր: Միևնույն ժամանակ մենք համոզված ենք, որ մարդկանց միջև հարգալից շփման հիմքում չեն կարող ընկած լինեն մարդու կենսաբանական, գենետիկական կամ սոցիալական հատկանիշները:



Արդյո՞ք տրանսգենդեր մարդիկ միշտ գոյություն են ունեցել:

Տրանսգենդեր անձանց գոյությունը փաստագրված է դեռ վաղեմի ժամանակներից գրեթե բոլոր մշակույթներում, հասարակություններում և բնիկ ցեղերի պատմության մեջ: Մինչև Եվրոպայի կողմից Ամերիկայի բացահայտումը և գաղութացումը, որոշ ամերիկյան բնիկ ցեղեր բացի արականից և իգականից ունեին երրորդ գենդերային ինքնությունը: Հին Հնդկաստանում հիջրաները, կանանց դերակատարություն ունեցող երրորդ գենդերային կամ տրանսգենդերի կաստան էր: Հիջրաների մասին նշում կա անգամ Կամասուտրայում: Հին Հունաստանում, Փյունիզիայում, իսկ ավելի ուշ նաև Հռոմեական Հանրապետությունում, Կիբելյան համարվում էր նաև տրանսգենդեր կանանց աստվածուհին: Տրանսգենդեր անձանց մասին հիշատակություններ կան նաև Ասորեստանի, Պարսկաստանի և այլ երկրների պատմությունների մեջ:

Կարևոր է հիշել՝ տրանսգենդեր անձիք, ինչպես ցիսգենդեր կանայք և տղամարդիկ միշտ գոյություն են ունեցել: տրանսգենդեր լինելը նորություն չէ և ոչ մի մշակույթում, ուստի համարելը որ տրանսգենդեր անձիք կան միայն արևմտյան մշակույթում, սխալ է: Այս կարծատիպը թերևս կապվում է այն հանգամանի հետ որ տրանսգենդեր անձանց իրավունքներն առավել պաշտպանված են արևմուտքի երկրներում:



Ո՞վքեր են տրանսսեքսուալ անձիք:

Ինչպես արդեն նշվեց «տրանսզենդեր» եզրույթը ընդհանրացնող տերմին է բոլոր մարդկանց համար, ում գենդերային ինքնությունը տարբերվում է իրենց կենսաբանական սեռից: **Տրանսսեքսուալ** անձիք համարվում են տրանսզենդեր, բայց սա ավելի հին և բժշկական եզրույթ է, որը նախընտրելի է որոշ մարդկանց կողմից, ովքեր անցնում են, անցել են կամ մտադիր են ստանալու սեռափոխման համար անհրաժեշտ բժշակական միջամտություններ: Կյանքի այն ժամանակահատվածը, երբ մարդիկ ստանում են տարատեսակ բժշկական միջամտություններով իրենց կենսաբանական սեռը գենդերային ինքնությանը համահունչ դարձնելու համար, կոչվում է **սեռափոխման փուլ**: Մարդկանց, ովքեր ծնվում են իգական, բայց փոխել են, փոխում են կամ փոփոխելու են իրենց մարմին, այն «առավել արական» դարձնելու համար, ընդունված է անվանել տրանսսեքսուալ տղամարդ կամ կրճատ՝ տրանս տղամարդ, իսկ հակառակ դեպքում՝ տրանսսեքսուալ կին կամ կրճատ՝ տրանս կին:

Կարևոր է հիշել՝ ոմանք սեռափոխվելուց հետո, և սեռափոխման ցանկություն չունեցողները, չեն ցանկանում կոչվել տրանսսեքսուալ կամ տրանսզենդեր: Ոմանք ցանկանում են լինել ուղղակի կին, տղամարդ, կամ ազենդեր են: Այնուամենայնիվ, մենք համոզված ենք, որ անկախ մարդու կյանքում ունեցած բժշկական միջամտությունների քանակից ու տեսակից, յուրաքանչյուրս արժանի ենք հարգանքի: Ոմանց տհաճ է իրենց բժշկական միջամտությունների կամ սեռական օրգանների մասին խոսելը: Մենք հավատացած եք՝ նման տեղեկատվությունը փոխհարգալից շփմանը կիսանգարի:



Ինչպիսի՞ կապ կա սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության միջև:

Գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշվածությունը նույնը չեն: Սեռական կողմնորոշվածությունը մարդու մշտական **հուզական, զգայական, զգացմունքային և սեռական** ցանկության հակումներն են որոշակի սեռի անձանց հանդեպ, իսկ գենդերային ինքնությունը մարդու սոցիալական սեռն է, և պայմանավորված է անձի ներքին զգացումով: Թրանսգենդեր անձիք, ինչպես մնացած բոլորս, կարող ենք լինել **տարասեռական, նույնսեռական, երկսեռական կամ անսեռական**: Սովորաբար Թրանսգենդեր մարդիկ սահմանում են իրենց սեռական կողմնորոշվածությունը՝ առաջնորդվելով գենդերային ինքնությամբ: Օրինակ, մի Թրանսգենդեր կին, այլ կերպ ասած, մարդ, ով ծնվել է արական, և բայց նրա գենդերային ինքնությունն իգական է և նրան գրավում են կանայք, ապա նշյալ անձը կարող է լինել նույնսեռական կին: Կամ երբ անձը ծնվել է արական, բայց նրա գենդերային ինքնությունը իգական է և նրան գրավում են տղամարդիկ, կարող է լինել **Կարգավորված երկսեռական մարդու գենդերային ինքնությունը պայմանավորված չէ սեռական կողմնորոշվածությամբ, և Թրանսգենդեր անձանց անվանել նույնսեռական կամ նույնսեռականների՝ Թրանսգենդեր սխալ է: Մենք համոզված ենք, որ անկախ մարդու սեռական կողմնորոշվածությունից, գենդերային ինքնությունից և ինքնարտահայտումից, յուրաքանչյուր մարդ պետք է ազատ լինի խարանից ու խտրականությունից և արժանի է հարգանքի:**



Արդյո՞ք տրանսգենդեր լինելը հոգեկան խանգարում է:

Հոգեբանական վիճակը հոգեկան խանգարում է համարվում միայն այն դեպքում, եթե դա տառապանքի կամ անաշխատունակության պատճառ է հանդիսանում: Տրանսգենդեր անձիք չեն զգում, որ իրենց գենդերային ինքնությունն առաջացնում է տառապանք կամ անաշխատունակության, ինչը նշանակում է, որ տրանսգենդեր լինելը հոգեկան խանգարում չէ: Խարանի, խտրականության ու բռնության պատճառով տրանսգենդեր անձանց համար շատ հաճախ կարևոր է սոցիալ հոգեբանական աջակցություն ստանալը, ինչպես նաև հաճախակի բժիշկների հսկողության տակ գտնվելը՝ հորմոնալ բուժման կամ բժշկական այլ միջամտությունների կարիքներից ելնելով: Կարծրատիպերը, ծաղրանքը, բռնությունն ու անարգանքը կարող են հանգեցնել տառապանքների և հոգեբանական խնդիրների: Սա հանգեցնում է նրան, որ տրանսգենդեր անձիք ավելի հաճախ են տառապում դեպրեսիայով և կարճատև հիշողությամբ: ***Կարևոր է հիշել, թեպետև գենդերային ինքնությունը պայմանավորված մարդու հոգեբանական աշխարհով, այնուամենայնիվ կին, տղամարդ կամ տրանսգենդեր լինելը չի կարող լինել խանգարում կամ շեղում: Մենք համոզված ենք, որ անկախ մարդու գենդերային ինքնությունից և հոգեբանական ներքին աշխարհից, մարդկային յուրաքանչյուր շփան տեսակի համար փոխըմբռնումը կարևոր պայման է:***



ԵՉՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՐԱՐԱՆ


Սեռականությունն անհատի կենսաբանական, սոցիալական, հոգե-
ֆիզիկական և էմոցիոնալ դրսևորումների ամբողջությունն է, որը կազմում է
մարդու ինքնություն մաս:

Սեռականության դրսևորման համար պատասխանատու ֆիզիոլոգիական
մեխանիզմների ձևավորման հիմքում ընկած են մարդկային գենետիկական և
սոցիալական բնութագրիչները:

Սեռականության բաղադրիչներ.

1. Սեռ
2. Սեռական կողմնորոշվածություն
3. Գենդեր
4. Սեռական վարքագիծ

Տարբերում են մարդու կենսաբանական սեռի երկու տեսակ՝ **արական և
իգական**, սակայն որոշ նորագույն տեսություններ **միջանկյալ սեռը**
(ինտերսեքսը) դիտարկում են որպես **երրորդ կենսաբանական սեռ**:



Խոսելով մարդու կենսաբանական սեռի մասին՝ անհրաժեշտ է նշել, թե սեռական տարբերակման որ մակարդակն է դիտարկվում,

Ըստ այդմ, դիտարկում են՝

- **գենետիկական սեռ**, որը բնորոշվում է մարդու քրոմոսոմային հավաքակազմով և լինում է XX (իգական), XY (արական), ինչպես նաև հնարավոր են միջանկյալ տարբերակներ՝ XXY (ինտե-րադիկ) և XYY (ինտերտոդա),
- **գոնադային սեռ**, որը բնորոշվում է սեռական գեղձերի առկայությամբ, որոշիչ է սերմնարանի կամ ձվարանի առկայությունը, սակայն հնարավոր է նաև երկու գեղձերի միաժամանակյա առկայություն:
- **անատոմիական սեռ**, որը բնորոշվում է մարդու արտաքին կամ ներքին սեռական օրգանների առկայությամբ,
- **մանկաբարձական սեռ**, որը պտղի սեռն է և բնորոշվում է մանկաբարձի կամ գինեկուղզի կողմից՝ համաձայն հղի կնոջ կլինիկական զննումների
- **ծննդյան սեռ**, որը նորածնի սեռն է, բնորոշվում է ծնունդն ընդունող մանկաբարձի կամ գինեկուղզի
- **եղբմիջային սեռ**, որը բնորոշվում է անձի սեռական գեղձերի կողմից արտադրվող սեռական հորմոնների քանակական և երկրորդային սեռական հատկանիշների առկայությամբ (հաճախ հորմոնային խանգարումները անձի հորմոնային սեռի և անատոմիական սեռի տարբերության պատճառն են)


- **անձնագրային սեռ** կամ անձի փաստաթղթերում նշված սեռ, որը կարող է չհամընկնել ծննդյան սեռի հետ
- **հոգեբանական սեռը** որոշվում է նրա՝ որևիցե սեռին պատկանելու ինքնագգացողությամբ և սեռական նույնականացմամբ: Հնարավոր են դեպքեր, երբ մարդու սեռական նույնականացումը չի համընկնում նրա կենսաբանական սեռի կամ սեռերից ոչ մեկի հետ: Այս մարդիկ կոչվում են անդրոգեններ: Նման նույնականացում կարող է դիտարկվել նաև անձի սոցիալական սեռի որոշման դեպքում:
- **անձի սոցիալական սեռը կամ գենդերն** աշխարհագրական, էթնիկ, սոցիալական և պատմամշակութային նորմերի վրա հիմնված սեռի ավանդական տարանջատումն է արականի և իգականի: Այս տարանջատման հիմքում ընկած են հասարակության կողմից ընդունված անձի կարծրատիպային դերակատարումները: Սակայն, ինչպես նշվեց, լինում են դեպքեր, երբ անձի սոցիալական սեռը չի համընկնում ո՛չ արական, ո՛չ էլ իգական սեռական դասակարգումների հետ: Մարդկանց, որոնք իրենց վերապահում են թե՛ արական և թե՛ իգական կարծրատիպային դերակատարումներ, անվանում են **երկգենդերներ**, իսկ նրանց, ովքեր իրենց չեն դասում ո՛չ արական, ո՛չ էլ իգական սոցիալական սեռին, անվանում են **ագենդերներ**:
Գենդերային ինքնությունը – մարդու ներքին ինքնագգացումն ու ինքնաընկալումն է որպես այս կամ այն գենդերին պատկանելու, այսինքն որպես կին, տղամարդ տրանսգենդեր և այլն:

Այն մարդիկ ում գենդերային ինքնությունը համընկնում է անձնագրային սեռին, կոչվում են **ցիսգենդերներ**

Այն մարդիկ ում գենդերային ինքնությունը չի համընկնում անձնագրային սեռին, կոչվում են **տրանսգենդերներ**


Մարդիկ, որոնք իրենց վերապահում են թե՛ արական և թե՛ իգական կարծրատիպային դերակատարումներ, անվանում են **երկգենդերներ**,

Նրանք, ովքեր սովորաբար խուսաբում են որևէ գենդերային ինքնության հետ ասոցացվելուց, անվանում են **ագենդերներ**



Սեռական կողմնորոշվածությունը մարդու սեռական չորս բա-ղադրյալներից մեկն է: Դա մարդու մշտական հուզական, զգայական, զգացմունքային և սեռական ցանկության հակումներն են որոշակի սեռի/գենդերի անձանց հանդեպ: Ընդունված է համարել, որ գոյություն ունեն 4 սեռական կողմնորոշվածության երեք տեսակներ՝ տարասեռական, նույնասեռական և երկսեռական և անսեռական:

- **Տարասեռական կողմնորոշվածություն:** Սա անձի մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեռական ցանկության հակումն է հակառակ սեռի/ գենդերի ներկայուցիցիչների նկատմամբ:
- **Երկսեռական կողմնորոշվածություն:** Անձի մշտական հուզա-կան, զգայական, զբաղմունքային և սեռական ցանկության հա-կումն է և՛ իր սեռի, և՛ հակառակ սեռի/գենդերի ներկայացուցիչների նկատմամբ:
- **Նույնասեռական կողմնորոշվածություն:** Սա անձի մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեռական ցանկության հակումն է նույն սեռի/ գենդերի ներկայուցիցիչների նկատմամբ:
- **Անսեռականություն** անձի մոտ սեռական կողմնորոշվածության և սեռականության դրսևորումների բացակայությունն է




RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

Էլ .փոստ՝ rightsidengo@gmail.com

Վեբ կայք՝ www.rightsidengo.com

Հեռ.՝ +374 11 770 880



Սույն գրքույկը պատրաստվել է հրատարակվել է «Առողջության իրավունք» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, որը իրականացվում է «Տղամարդկանց առողջության Եվրասիական կոալիցիայի» (ECOM) կողմից՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի աջակցությամբ

The views described here are the views of this institution, and do not represent the views or opinions of The Global Fund to Fight AIDS, Tuberculosis & Malaria, nor is there any approval or authorization of this material, express or implied, by The Global Fund to Fight AIDS, Tuberculosis & Malaria.



*Eurasian Coalition
on Male Health*

տարածվում է անվճար